

Հայս, և մանաւանդ առաջնոյն թագաւորաց գերեզմանատեղի ըլլալն :

Ոչ իբրեւ ստոյգ՝ այլ անուանցն և նշանակութեան մերձաւորութեամբ՝ յիշատակի և քննութեան արժանի համարիմ և քանի մի փոքր զիջ. ինչպէս, Էրիս, Տ'րէ, Յունաց Արիսի կինն, անուամբ և յատկութեամբ Հեռ նշանակելով, ըստ մեր լեզուիս : — Միւռա, Molra, մականուն մեռելութեան զիցունեաց Պարկայց. որոց հակառակ էջելոք Մայր կոչէին տղաքեր կանանց և տղայոց խնամակալ ուրիշներ, որոց գործն հայերէն բառիք նշանակութեան յարմարագոյն է : Ասոնք ունէին և Ոկամ կամ Ոգամ, Ոկմիս անուն շատուած մ'այլ՝ ճարտասանութեան, որ լսեցընէ մեզ Բասեռոյ Ոկամի կամ Ոկմի գիւղն, նշանակութեան արժանի :

Մեր ի զիս պատահած ուրիշ կամ սխալ գրուած շատուածներն անյիշատակ չթողու համար միայն, նշանակեցն և աշխարհիս վերջին ժամանակի և Նետողաց ազգին վրայօք հնարուած գրուածք մի, ըստ որում այն ասեռն կարեոյ կողմերում պիտի կանգնուին :

Գիտսի, Արմեսի և Հերմենայ կամ Արմնայ, (ըստ այլ օրինակի՝ Իդիես, Արմնիս և Արմնայ) կուրքերն, որոց երկրպագութիւն չընելնուն համար՝ շատք պիտի նահատակուին : Գրուածին հեղինակն՝ եթէ ի Յունաց առած է այս անուններս և թէ ոչ՝ համարի թէ Հայոց անծանօթ չէին :

Եղիշեք Պլուտարքոսի ըսածն այլ (Յաղագս Գետոց գրոց մէջ), Երասի թագաւորին (ուսկից անուն գետոյն) պատուէր առնուէն յԱրհաւրաց կամ ի Վնասահաւած դից որ իրեն զոհէ երկու աղջիկ, և այլն, (ՇԳ. 145). այսոր անունն յունարէն այլ յոգնակի գրուած է Ἀποροποιία, Լատինն այլ Aueruncator և յիշեցընէ մեզ Ազաթանգելի ըսածը՝ Արտաշատայ բերդպահն այլի կնոջ համար, « Հրաման առեալ յԱրհաւրաց », որ ամէն օր (13 տարի, հաց մի ձգէ ի վերապն՝ հողէպահիկ Ս. Լուսաւորչին :

Բեւեռագիր ընթերցողաց թողումք՝ վանի և ուրիշ Հայոց կողմերու արձանաց մէջ գտած շատուածները յայտնել և հաւաստել : (Շարայարեի)

ԱՐՈՒՍԱՅԼԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(Տես յէջ 130)

Բ. « Հայոց՝ Ալգեստանի և Զուհրեայ մէջ » եղած Եկեղեցեաց՝ յետոյ ինչ ըլլալն : —
 « Երբ և ոչ մէկ զխաւոր Հայու մի թողու »
 « ցին Զնալ յԵգիպտոս, Ղիտիք առացան »
 « այս ընդարձակ և հին եկեղեցին, մեր տի- »
 « բոլ Սուլտանի վճռով, և միջնորդութեամբ »
 « Նէյիս ար-Ոսայիս Սաֆի աստ-տաւա իսկ »
 « Ապու՝ Մաալի Կարի (կամ գրագրի), որ և »
 « իսկ Շարաֆի կոչուէր : Ետոյ Հայոց (համ- »
 « բարապետն կամ պաշտպանն՝ Վահրամ »

» Սայիտ աստ-տաւա Բլեյ, Ճիլձձձ Ժաբա » նորոգեց այս իրաց յարմարութիւնը » :

Յիշեալ սուլտանն՝ կամ Նուրէտինն է կամ Սալահէտինն : Վահրամն այն իշխանաւոր՝ չէր այն Շնորհալոյ հօրեղոր որդի և եղբայր Գրիգոր եպիսկոպոսի մեծիշխան Վահրամն, որ յետոյ պիտի յիշուի ի պատմութիւն, և որ այս պատմածին թուականէն 40 կամ 50 տարի առաջ պայծառանար յԵգիպտոս. բայց գուցէ ասոց ցեղէն ըլլայ. իսկ ասոր գործն կամ պաշտօն՝ զոր Արուսահլ Բլեյ Հայոց կոչէ, և անգլ. Թարգմանիչն steward of the Armenians գրէ, կարծեմ վերը գրեցոց մէջ նշանակէ, և որ և է կերպով՝ գործակալ մի էր Հայոց : Իր ըրած գործն ալ (որ քիչ մի մութ է) գրեւէն ետեւ, պատ-

1. Եղն բնագիրն չըսեր Արհաւրքս այլ հրաման առեալ կամ հրամայեալ ի տեսնան. Ճորճատրօքս αὐτὸ ὁράματος. կամ յատուածուստ քերպի՝ յայտնեալ քուս ὁρατοφάνης :

միշն յիշէ եկեղեցւոյն նորոգութիւնն իպն-
Շարաֆի ձեռք և Աղեքեանցորդի պատրիար-
քէն օծուիլը, և անոր արժանաւոր ըլլալը,
ուր Հարաթ-ար-Ռում (հռովմէարման) թաղի
Ս. Ստուածածնի եկեղեցիէն քահանայք
զայն պաշտօնը կատարելու. յիշէ և եկեղեց-
ւոյն պատկերաց նկարողները, որոց ամենուն
գործն աւարտեմք է յամիս 1177:

« Այս ստեղծեալ եկաւ ի Հայոց եպիսկո-
» պոս մի, հետն այլ երեք քահանայ, Հայոց
» թագաւորէն և պատրիարքէն ղրկուած.
» երկուքէն այլ մէկ մէկ պատգամ, և երկու
» այլ թուղթ բերելով. որոց մէկը գրած էր
» Մէլիք Սալահատին, միւսը՝ անոր եղ-
» բայրն Մէլիք Սալահատին Ապուպէքը,
» այս Մէլիք Թաթխատին. որք պատուիրէին
» ասորը՝ իրենց թղթերովը, պատուով ընդ-
» ունիլ զեպիսկոպոսն. և Հայոց երկու ե-
» կեղեցիները՝ որ յԱղեքստանն և ի Զուհ-
» րի՝ զարձնել տալ անոնց. Եպիսկոպոսն
» ինչա յեկեղեցի Ս. Յովհաննէս Մկրտչի՝
» որ ի Հարա Չաւիա. Բայց Ֆաբի՝ ատ-
» թուի չհաւանեցաւ այս բանիս. եպիսկո-
» պոսն այլ հակառակելով անոր դէմ՝ ամիս-
» ներով կեցաւ հօն, մինչև հիւանդանալով
» անաւ, առանց իր նպատակին հասնելու.
» Թաղուեցաւ Հայոց Զուհրի եկեղեցւոյն
» մէջ. Աստուած ողորմի հոգւոյն »:

Ֆաբի՝ զամսակացի մ'էր, Աղեքստանին
կայուածատէր: Մեզի նշանակելին է այդ ան-
ժանօթ մնացած յիշատակն, եպիսկոպոսի մի
պատգամաւորութեան, ի քաղաքական և ե-
կեղեցական գլխոց Հայոց. յետինն յայտ է ի
ժամանակին՝ որ էր ճարտար և փառաւոր
կաթողիկոսն Գրիգոր Տղայ. առաջինը թարգ-
մանիչն կարծէ թէ մեր մեծագործ Ա. Լեւոն
ըլլայ. այլ չէ. հապա իր եղբայրն է. Պարո-
նաց Պարանին Ռուբէն, որ վախով զրկած էր
առ Սալահատին, առ որ և Գր. Տղայոյ
գրած մէկ մտերմական թուղթն յիշուի, թէ
և ստուգութիւնն երկրայական է. իսկ Լեւոն
ինչպէս վարուեցաւ Սալահատինին հետ,
ժանօթ է մեզ, ի Սիսուան. որոյ պատմական
մասին փութակերէն թարգմանութեան՝ խառ-
անգլիացի թարգմանիչն զընթերցողը. (Բայց
ոչ համաձայն Հայ Հեղինակին). Սալահատ-
ինին և Սալահատինին թուղթերն ընդունողն
Թաթխատին՝ էր ետքինիս որդին, փոխարեց
գրուած յիշխպոսն՝ յամի 1183, ուսի կան-
չուեցաւ յԱտորիս յամի 1186. ուրեմն այս եր-
կու թուականաց միջոց եղաւ Հայոց եպիս-
կոպոսին զայն, որով և մեր Ռուբենի իշխա-
նապետութեան ստեղծ, մինչ Լեւոն ոչ թէ
միայն չէր թագաւորած՝ այլ և ոչ պայտաւորած:
Այս դիպումէն քիչ վերջը, պատմէ Ա-

րուսա՛ն՝ Ղփտեաց գողութեան կասկած ու-
նենալն եկեղեցեաց պահպանի մարմնաց
վրայ և զանոնք ձեծելը. ստանց այլ բողո-
քելն առ Ֆաբի՝, որ փակել կու տայ զեկե-
ղեց/ս. յետոյ սուլտանն հրովարտակաւ յնորհէ
բանալ և կատարել պաշտօնը: Բայց Ֆաբի՝ի
մեռնելէն ետեւ՝ նոր կաղւածածներն Պարս-
կաստանին Տուս (Tus) քաղքէն եկած իմամ մի,

« Սկսաւ նեղել զգրիստոնեայս, և պար-
» գեւներ պոհանջիլ կաշառի կերպով, ին-
» չուան ուր որ իր իշխանութիւնն հասնէր.
» յետոյ երկու եկեղեցիներն այլ փակել
» առաւ, մեծին սպանները կողոպտելով, և
» գրան արգելք դնելով խոշոր գերան մի. ին-
» չուան հիճը. 581 (Քրիստոսի 1185) տար-
» տը Շապակ ամսոյ 13ին, ուրբաթ օր: Այս
» ամեն Հայ մի եկաւ, որ կ'ըսէր թէ բա-
» րեկամ էր թաճ ատ-տաւա (Թազ պետու-
» թեան մականուննալ) Վահրամայ Հայոց,
» (Շնորհալոյ հօրեգօր) որ Ալիմամ Հաֆիզ
» (խալիֆայի) վզուրկն էր, և կ'ըսէր, թէ
» այս վէճիրին ստակակալը Թաղած էր մեծ
» եկեղեցւոյն մէջ. և հիմայ եկած էր զանոնք
» հանելու: Բայց իր ըսածին մտադրութիւն
» չըրին. սակայն իրեն, կ'ըսուի, թէ սյնքան
» պնդեց իր երեւակայածը, որ եկեղեցին
» քացին իրեն և սկսաւ տեղ տեղ փորել.
» յետոյ ըսաւ. Ստակն աներեւոյթ եղեր է
» այս տեղէս. եկեղեցին կողոպտողներն ա-
» ղած են. և սկսաւ զանգատիլ թէ, անի՛
» բաւուր թիւն մ'եղած է: Եկեղեցին իրեն
» համար բաց մնաց, և քանի որ այս երե-
»ւակայութեան մէջ էր, կեցաւ հօն. և երկ-
» րորդ կնիք մ'այլ գրաւ Մէլիք ալ-Մու-
» զաֆթարի (վերոյիշեալ Թաթխատին) զը-
» բածին վրայ: Բայց նոր նորոգութիւն չի
» չեղաւ հօն: Երբ Թաթխատին յԱտորիս
» գնաց, հիճը. 582 Շապակ ամսուն (1186
» Քր.) և եկաւ Ալ մէլիք Ապու Պէքը (Սա-
» լահատինի եղբայրն, իրեն խնամակալ
» անոր որդւոյն): Հրամայեց՝ որ այս երկու
» եկեղեցիները զատեն իրարմէ, նոյն տա-
» րին՝ Թամազանի 10ին, և Ղփտիք և Հայք
» սիրացան եկեղեցեաց և սկսան գործածել.
» յետ տարի մի և 15 օր զոց մնաւու:
» Ղփտիք մեծ եկեղեցւոյն մէջ պաշտօն կա-
» տարէին, Քուհիաք (կամ Խոյսք ըստ Ղըփ-
» տեաց) օրհնեալ ամսոյ առաջին օր (նոյնմ-
» չեկու.), ամբի՛ Մարտիրոսաց 903 թուին
» (1187 Քր.). և անկէ ետեւ խփտիք թող
» չուրին Հայոց՝ մեծ եկեղեցւոյն մէջ պաշ-
» տել: Այս բանիս համար փողովք ըրին
» զխաւոր անձինք. և երկու եկեղեցիքն այլ
» նորէն Հայոց ստացուած եղան »:

Որքան ատենի մնացին եկեղեցիքն ի ձեռս

Հայոց, ծանօթ չէ մեզ. գոնէ Արուսահի տա-
տեն իրենք էին տէր. իր գրոց Յաւելուած
և մեր յառաջարանի մէջ յիշուած Մաքրիզի
երկար գրէ այս տեղւոյ յիշատակին, և թէ,
վերջ յիշուած դիպագածներէն դար մի վերս-
ը՝ իսկ Բայալուն Նար տալտանին իրա-
դարձներ և լնակ մի շինել տուած ատեն՝
այդ եկեղեցեաց չորս կողմը, ժողովուրդն
ինքնօրէն արեր փուլցեր կողոպտեր է գա-
նուն և ուրիշ եկեղեցիներն այլ, իսկ մեր
պատմիչն՝ վերջի ըսածէն ետեւ, զանոնք այլ
զՀայս այլ կու թողու, և կ'անցնի ուրիշ և
ուրիշներուն եկեղեցեաց ստորագրութեան.
գորս մենք այլ թողով իրենց, մերայոց
վերաբերեալ տեղիքն և մեծ պաշտօնեայքը
յիշենք իր ըսածներովը և ուրիշներու ծանօ-
թութեամբք:

« Տուրայի, Լ, Ե, վանք և եկեղեցին. —
» Բրտի վանք յԱճԱՅԻ անուանեալ վանքն
» նուիրուած է Ս. Մերկիրիոսի. կ'ըսուի
» թէ և յանուն Ս. Թէոդորոսի այլ կոչուած
» է. կայ հոն և եկեղեցի մի յանուն փառա-
» ւորեալ Ս. Գեորգեայ, Տուրայի վիճակին
» մէջ, (Նիդոս) գետնի (աշ) եզրքը. (Այս-
» գետանէն հացիւ երկու մղոն հեռի, և հա-
» բաւակողմն), Եկեղեցին փոքր էր քանի որ
» յակորիկ խփտեաց ձեռքն էր. բայց երբ
» Գրիգոր պատրիարքն (կաթողիկոսն) Հայոց
» եկաւ յԵղիպոս, և Հայք (իրենց) ազգա-
» կեց վէգիր) Ամիր ալ-ճալիշ Պատրի չորս
» կողմ՝ ժողովեցան, Յակորեաց Անպա-
» (Հայր) կիւրեղ պատրիարքի ատեն, և Տու-
» րայի վիճակն տրուեցաւ Հայոց, սառնք ա-
» ռին զեկեղեցին և փուլցին, և անոր տեղ
» մեծ ընդարձակ եկեղեցի մի շինեցին շատ
» զմեծութեամբ, և կոչեցին յանուն Ս. Գեոր-
» գայ. վրան ալ աշտարակ մի կանգնեցին
» (իրք զանգակատուն), որոյ դուռն եկեղեց-
» ւոյն միջէն էր. եկեղեցւոյն չորս դին այլ
» պատ քայեցին. այն չորսպատնիս մէջ կար
» աղբիւր և մի ջրաղբայ մի եւս: Եկեղեց-
» ւոյն չորս կողմն այլ տեղ կար նարնջինի
» ծառոց և երկու տապալք, յճԻՅԻՅ, որ
» են պտղատու արմաւենիք, և ուրիշ ծա-
» ուր: Երբոր Հայոց վրայ փորձանքներն
» եկան, եկեղեցին նորէն դարձաւ Յակոր-
» կաց, Անպա Մարկոսի պատրիարքութեան
» ատեն, որ առաջ կոչուէր Ապուլ ֆարան
» իսկ Ջարաւ, և էր ԶԳ ի յալորդութեան
» (պատրիարքաց Աղեքսանդրի):... Ուրիշ
» գրուածի մի մէջ կ'ըսուի, թէ Ս. Գեորգայ
» վանքն ի ձեռք բերաւ Ապու Եասիր քա-
» հանայն, աւելի ձանչուած իսկ ալ-Բու-
» դալ անուամբ, և հանդիսապէս թաղուեցաւ
» ի Բաուժա ամառն, յամին 559 (Քրիստոսի

» 1164) ի պատրիարքութեան Անպա Յով-
» հանու, հաւանութեամբ Հայոց: Ապու
» Եասիր՝ եկեղեցւոյն վերնայարկին վրայ է-
» կեղեցի մ'այլ շինեց յանուն Ս. Մինասայ,
» և ուրիշ մ'այլ յանուն մեծի Ս. Յովհաննու
» Մկրտչի և Գրիգորի. այս եւքի եկեղեցիս
» կենդրոնական մեծ եկեղեցւոյն հարաւա-
» կողմն էր, Հայոց վանաց մէջ ի Տուրա, և
» օծուեցաւ յ'10 Բաուժա ամառ, յամի 902
» իրաւափառ Մարտիրոսաց (1181 Քրիս-
» տոսի). շինութեան ծախքը նախ վճարեց
» իսկ Մալքուր, ի ժամանակի օծմանն յԱ-
» պու Մանսուրէ, որ և էր վերակացու չի-
» նութեան պարսպաց Գահիրէի և Մարայ:
» Այս վանաց մէջ կայ աշտարակ մի, աղօ-
» բիք մի, և պարտէզ մի, որ Հայոց ստա-
» ցուած էր. և երբ անոնցմէ ելաւ, Յակո-
» բիքը ստացան, 600 թուականէն ետեւ
» (Քրիստոսի 1204): Երբ Ապու Եասիր մե-
» րաւ, վանքն եղաւ սաացուած իր աշակեր-
» տաց և խփտեաց, և այսպէս մնաց մինչեւ
» մեր ատեն »:

Այդ 1204 թուականէն ինչուան Արուսահի
գրութեան ատեն, ինչպէս յառաջարանիս մէջ
տեսանք, շատ տարի չէր անցած. յետոյ
Տուրայի վանաց և եկեղեցւոյ ինչ ըլլա-
լը՝ քննելի է Բրտլէի գրոց մէջ: Մենք մտա-
րեւել տանք՝ որ այդ տեղւոյ յիշեալ փոքր ե-
կեղեցին յանուն Ս. Գրիգորի՝ անտաղակոյ
էր լուսաւորչին մերոյ, զի և վկայուի ի ձեռս
Հայոց ըլլալն: Երկրորդ մտաբերելին է՝ մե-
ծապոյն եկեղեցւոյ շինութիւնն և վանաց
պայծառութիւնն, շնորհիւ մեծագոր Հայ վե-
զրկին (Պատր ալ-ճամալի կամ Ամիր ալ-
ճիւլիւշ) և մեծափայլ Գրիգոր Վկայասէր կա-
թողիկոսի, Տեղեացա մօտ լիբանց գազաթում
Ալ-Քուսայի վանաց Մեղեղաց եկեղեցի-
ները ստորագրելու ատեն՝ կու յիշէ Արու-
սահի Գահիրէի պարիսպներու շինութիւնը
Ալ-Մուսալանգիր խալիֆայի և Ամիր ալ-
ճիւլիւշ Պատրի ատեն. այս տեղ ծանօթա-
բարն յիշէ ըստ Մաքրիզեայ, որ նախ Ալ-
Միւլիզ խալիֆայի ատեն շինուեցան պա-
րիսպ Գահիրէի, յամի 969-70. Բայց դար
մի վերջը 1087, մեր Պատր վզուրկի՝ փուլց
զանոնք և աւելի ընդարձակ շինեց, Յովհան
կրօնաւորի մի վարպետութեամբ, որ Քու-
սայիի եկեղեցեաց մէկին մէջ թաղուած է:
Դար մ'այլ վերջը Սալահադին նորոգեց և
մէկ կողմէն ընդարձակեց. իսկ հիմակուան
վիճակի մէջ աւելի Պատրի շինութեան մնա-
ցորդք կ'երեւին քան ուրիշներուն:

Պատրի յիշատակ մ'այլ կ'ընէ Արուսահի՝
Նուբար տեղագրութեան մէջ. երբ յիշէ այդ
երկրին Սողոմոն թագաւորը, որ քաղաքա-

կան հոգերը թողլով, Ս. Ոստիփրիոսի նուիրումած եկեղեցւոյ մէջ աղօթքնով կ'անցընէր ժամանակը. երբ այս բանս իմացուցին Մուսա զանգիր խալիֆայի,

« Ամիր ալ-Ճիլիլ-ը Պատր վզուրկ՝ մարդ
» խաւրեց և բերել տուա զնա ի Գահիրէ. և
» երբ հասառ քաղքին դրան, մեծ հանդի-
» սիւն և պատուով և երաժշտաց զուղղով մի
» ընդունեցաւ, ընտիր հնձնելու ձի մ'այլ
» զրկուեցաւ իրեն. հրամմեց (վզուրկն) տե-
» րութեան պատուաւոր անձանց՝ որ աղէկ
» հոգան զնա. և յետոյ բնակեցուց վայելուչ
» տան մէջ, ճոխաբար զարդարած մարմար
» քարամբք, քանդակազօրծ տախտակներով,
» զոյնագոյն և ոսկեթել հիւսուած դիպակ-
» ներով: Տարի մի ապրեցաւ նա այս տեղ.
» և վզուրկն ստեպ կ'երթար զինքը տեսնելու,
» այլեւայլ իրաց վրայօք խօսելով հետը, և
» ուշ զնէր անոր ըսածներուն. և կու տեսնէր
» որ նա միայն փափագէր Աստուծոյ, — և
» բում փառք և զօրութիւն, — բոլոր սրտով
» և մտօք հրաժարելով ամեն մարդկային բաղ-
» ձանքներէ: Այսպէս տարի մի ապրելով թա-
» զուրկն մեռաւ. և թաղուեցաւ ի վանս Ս.
» Գէորգայ ի Ինանտաք (յարուարձանս Գա-
» հիրէի) ի պատարաբութեան Կիւրդի ԿԶ
» պատրիարքի. գերեզմանն եկեղեցւոյ պա-
» րըսպին մէջ է, մօտ ի դուռն եկեղեցւոյն,
» մոնողին աշակողմը:.. Եւ կոչուեցաւ Սուրբ
» Թազաւոր »:

Պատրի ստեպ երթալ տեսնուիլն և ուշա-
դրութեամբ մտիկ ընելն այդ բարեպաշտ
Թազաւորին խօսից, զուշակել տայ իր խղճի
տագնապ կամ երկմտութիւն մի. վասն զի
ինքն այլ երկմիտ և կէսկէս էր, կէս քրիս-
տոնեայ և կէս մարիման. և այնքան քրիստո-
նէից պաշտպանելն և եկեղեցւոյ մէջ թա-
ղուիլն (ինչպէս առաջ յիշեցինք), երեւցնէ,
որ թէ արտաբուստ չէր, ներբուստ իր հայ-
րենի կրօնքը չէր ուրացեր: Խորագետ մարդ,
զգաստ պաշտօնեայ, քալ պատարաբետ, փա-
ռաւոր իշխան և վզուրկ, նեցուկ պետութեան
Եգիպտոսի, և զրեթէ վարիչ՝ 20 կամ աւելի
տարի. բայց ոչ կատարեալ արիասիրտ, զի
ոչ պարզահաւատ՝ առաջի մարդկայն. գոնէ
իր վերջի մտածութիւնն մեզի անյայտ, Աս-
տուծոյ յայտնի: Իր մահն հանդիպեցաւ յա-
մին, 1094 աշխարհօրէն ոչ միայն մեծ փառք
և համբաւով, այլ և յարգանք և սիրով.

ասով իր յաղթութեանց առաջնորդուած զօ-
րականք մէկէն իրեն տեղ հուշակեցին և նշա-
տուցին վզուրկ իր որդին, Դանշան Ապու'լ
Խասիմ, որ հասարակօրէն յԱրաբաց Ալ-Աֆ-
տալ կամ Աֆտալ կոչուի, **الفضل بن احمد**,
և երեք խալիֆայից ատեն 30 տարի վարեց իր
մեծ իշխանութիւնը հօրը նման, նա և ըստ
հաստաց. բայց ոչ անոր պէս խաղաղ վախ-
ճան ունեցաւ, այլ սպանութեամբ, յամի
1115: Մաքրիզի և ուրիշ Արաբացի պատմիչք
շատ անգամ յիշեն զնա. իսկ Արուսաւել ի
ստորագրեկն զվանքն Թամալայի, որ ի հա-
ստակողման Տուրայի, կ'ըսէ.

« Դանշան շատ հեղ կ'իջեմանէր այս
» վանքիս մէջ, և ատեն կ'անցընէր խառ-
» նափնդոր ու վայրապար. վանքին քով այլ
» պարտէզ մի յարդարեց, ամեն տեսակ ծառ
» և արմաւենիներ տնկելով. աղբիւրներ այլ
» վազցուց, վրանին ջրադարձ անիւներով,
» Թամալ ջանկով մ'այլ չրկապտեց պար-
» տէզը: Վանացս տարեկան հարկն առ զան-
» ձարան տէրութեան՝ 11 զենար էր. յետոյ
» այս հարկս դադրեցաւ, և անոր ստակով
» ձիթահանք շինեցին վանաց պարսպին մէջ,
» ամենայն մասամբ կատարեալ: Վանքն 41
» ֆեազայ (իւր 200 հազարչափ քառակու-
» սի) երկիր կալուած ունէր, զոր գորակեցին
» Ղուզք և Քուրդք նար Եւսուֆ (Սալա-
» հատտինի) Թագաւորութեան ատեն: Այս
» վանացս մէջ հանգչէր մարմին (Ս.) Պափ-
» նուտիոսի, որ վանացս առաջնորդ եղած էր,
» և ատեն կատարուի ի 15 Ամիր ամսոյ. պատ-
» կեր մ'այլ կար այս տեղ՝ Տիրամօր անարատ
» Կուսին Մարիամու: — Ալ-Աֆտալ (Դա-
» հնշան) իր տեղը՝ շինուածքին վերնայար-
» կին մէջ նստած կու գուարանար »:

Արուսաւել ուրիշ տեղ մի՛ Համրա Թաղին
մէջ Ս. Ոստիփրիոսի վանքը ստորագրելով,
կու յիշէ Դանշանի գրագիրը,

« Եւ յիս Ապու'լ Տաալ Խալն Ուսբուֆ կու-
» չուած, որ Հանապազորդէր աղօթելու այս
» եկեղեցւոյս մէջ և հաղորդուելու. և յետ
» հաղորդութեան ամեն օր որ զար՝ քահա-
» նային Համար պնակին մէջ դնեար մի կու
» ձգէր, անոր պաշտօնակատարութեան և
» անոյշ ձայնին հաւնեցով: Այս քահանայն՝
» Պահր ալ-Ճիլէ (Ժովակին) մէջ խղճուե-
» ցաւ. Աստուած հանգիստ պարգեւէ իր հոգ-
» ւոյն:

(Շարայարեղի).